ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Պրոդ Ինվեստ ՍՊԸ-ն ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ընդհանուր նկարագիր. Պատրաստի սննդի փաթեթի տրամադրման համար անհրաժեշտ սննդամթերքի ձեռքբերումը, պատրաստումը և հանձնումը իրականացվում են Կատարողի կողմից համապատասխան փաթեթավորված հիգիենիկ տարաներով կամ թղթե տոպրակներով: "Պարտադիր պայմաններ. Պատրաստի սննդի տրամադրումը պետք է իրականացվի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ն, ընդ որում, Կատարողը նախապես պատրաստում է Պատվիրատուի կողմից նշված քանակի չափաբաժիններ և տրամադրում Պատվիրատուին ոչ ուշ, քան 11:00, ավելացման հնարավորությամբ՝ պայմանավորված երեխաների հաճախելիությամբ, ոչ ուշ, քան պատվերը ստանալուց հետո 1 ժամվա ընթացքում: Մեկ երեխայի համար նախատեսված չափաբաժինը տեղադրված լինի մեկ ամբողջական տարայում կամ սննդային թղթե տոպրակում: Յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Մակնշումը «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածի համաձայն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի վրա պետք է նշվի քաշը: Փաթեթավորված պատրաստի սնունդը պետք է համապատասխանի ապրանքատեսակների տեխնիկական նկարագրերին: Անհրաժեշտության դեպքում մատակարարի կողմից պետք է ապահովվի մատակարարված փաթեթների ընդհանուր քանակի մինչև 20%-ի հետ վերադարձը չօգտագործվելու դեպքում: Յուրաքանչյուր աշխատանքային օր պատրաստի սննդի փաթեթի տրամադրման շրջանակներում մատուցվում են տվյալ օրվա համար սահմանված սննդատեսակները՝ առավելագույնը 100 երեխայի համար նախատեսված (պայմանավորված երեխաների հաճախելիությամբ ըստ պատվիրատուի պահանջի): Սննդամթերքի հանձնման-

	ընդունման գործընթացը յուրաքանչյուր օր իրականացվում է ՊՈԱԿ-ի համապատասխան հանձնաժողովի կողմից, հաստատվում է տնօրենի կողմից: Սննդի փաթեթների բաշխումը իրականացվում է ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակիցների կողմից: Պատրաստի սննդի փաթեթի տրամադրման համար օգտագործվող սննդամթերքին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ. համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 68 որոշմամբ ընդունված «Մսի եւ մսամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 034/2013) և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Պատվիրատուի հայեցողությամբ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում մատակարարված ապրանքատեսակների ցանկացած խմբաքանակի մինչև 4 անգամ կարող է փորձանմուշ ուղարկվել փորձաքննության, որը կիրականացվի պատվիրատուի նախընտրած փորձաքննություն իրականացնող կազմակերպության կողմից: Իրականացված փորձաքննության դիմաց վճարումները կատարվում են մատակարարի կողմից: Մինչև 30.12.2026թ.-ը յուրաքանչյուր աշխատանքային օր: "

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Прод инвест в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	